«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեական դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Արմինե Ստեփանյան

Մանկապարտեզ՝ «Միսիան համայնքի թիվ 2 ՆՈՒՀ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Բովանդակություն 2

Ներածություն 3

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում : 5

1.2 Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում : 6

1.3 Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման : 9

Եզրակացություն 12

Օգտագործված գրականության ցանկ 13

Ներածություն

Արդիականություն :

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Երեխաների դաստիարակության , զարգացման , ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանքի դերը դրանից էլ զատ՝մանկապարտեզինը:

Մեր աշխատանքի բուն նպատակը հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ – ընտանիք կապի առաձնահատկությունները , առավելությունները երեխայի դաստիակարության հարցում :

Նպատակը : Մանկապարտեզ – ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մաս են կազմում , քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում երեխայի ճիշտ զարգացմանը նպաստելը :

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում : Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին:

Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների ՝ տվյալ բնագավառի իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից : Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման :

Համագործակցություն :

Արդյունքում թե՛ ծնողը , թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների , հետաքրքրությունների մասին : Այս տեղեկությունը պետք է այնպես փոխանակել , որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին :

Օգտակարությունը :

Ընտանիքի և մնկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է : Անտարակույս, նա իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում : Սակայն հաագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ : Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր , որոնք կնպաստեն ներգրավել , ուղղորդել , խթանել և շահագրգռել երեխաներին ՝ ինքնուրույն հասնելու հաջողության :

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում :

Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղություններ.

. Շաբաթական կամ ամսական լրատուներ .

տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին ,որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները :

. Ծնողական ժողովներ .

քննարկում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր :

. Առավոտյան հանդիպումերի ընտացքում ծնողներին նախապես հայտնում ենք ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:

. Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին .

դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները , որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը :

1.2 Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

Երեխայի ուսուցման նպատակն է այնպես անել , որ նա ընդունակ լինի շարունակելու իր զարգացումն առանց ուսուցչի օգնության : Էլբերտ Հաբարդ

Մարդկային շփման առաջին փորձն երեխաները ստանում են ընտանիքում , բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլն երեխայի համար մանկապարտեզն է:Այն մեծ դեր ունի սոցիալականացման գործում : Այստեղ երեխան գտնում է նոր միջավայր, նոր աշխարհ՝ նոր կանոներով, նոր առօրյայով : Այն մի միջավայր է , որը երեխային բերում է ինքնաճանաչման , զարգացնում հետաքրքրություններն ու ազատությունը :

Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի , հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ , և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով , սովորել և ընտելանալ օրվա ռեժիմին (օրակարգին):

Յուրաքանչյուր երեխա ունի իր ուրույն զարգացման տեմպը և ոճը :

.Երեխաների առանձնահատկությունները պետք է հաշվի առնել նրանց հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս:

. Երեխաների հետ իրականացվող յուրաքանչյուր գործունեություն պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին ու խթանի նրանց մտածողությունը :

.Երեխան սովորում է իրերին ձեռք տալով , դրանք գործածելով :

Օրվա գործունեությունը պլանավորելիս՝ պետք է պլանավորել նաև խթանող , երեխաներին խրախուսող խաղեր :

Հիմնվելով դիտարկումների վրա ՝ պետք է դաստիարակը առաջարկի հավելյալ առաջադրանքներ ,որոնք կնպաստեն մտածելուն:Երեխաների զարգացման

կարևորագույն նախապայմանը բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, իմացական և հուզական փոխկապակցվածությունն է : Մի ոլորտի զարգացումը նպաստում է մյուս ոլորտների առաջընթացին :

Սոցիալական ազդեցություն

Մանկական հոգեբանների մեծ մասը պնդում են ,որ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ , քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալականացման գործում: Հայտնվելով մանկապարտեզում՝ իրեն անծանոթ շրջապատում , երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում : Եթե նա տանը սովորել է առաջին իսկ պահանջով ստանալ իր ուզածը, ապա նա նոր միջավայրում ստիպված է հաշվի առնել ուրիշի կարծիքը :

Մանկապարտեզում կազմակերպվում են միջոցառումներ, թատրոններ, նշվում են տարեդարձներ : Երեխան սովորում է արձագանքել իրադարձություններին :

Սահմանվում են հատուկ օրակարգ . Փոքրիկը զբոսնում է , սնվում, խաղում ,սովորում, քնում է օրվա հստակ ժամին : Ճիշտ սահմանված օրակարգը երեխայի զարգացման դրույթներից մեկն է : Մանկապարտեզում երեխան ստանում է առաջին առաջադրանքները, որոնք փորձում է ճիշտ կատարել օրինակ՝ դասավորել խաղալիքները, ինքնուրույն հանվել , հագնվել և այլն: Նման պարզ հանձնարարություններ կատարելը զարգացնում է երեխայի պատասխանատվությունն ու ինքնուրույնությունը :

Հոգեբանական ազդեցություն

Մանկապարտեզ հաճախելը դրական է ազդում երեխայի հոգեկան զարգացման վրա :

Ի տարբերություն տանը ծնողի, ընտանիքի անդամի կամ դայակի հսկողությամն մեծանալուն ՝ մանկապարտեզ գնալիս զարգանում են երեխայի՝

. Սոցիալական հմտությունները , նա սովորում է արդյունավետ հաղորդակցվել ուրիշ անհատների հետ :

.Թիմում աշխատելու հմտությունները ,

. Ձեռք է բերում նոր մոտեցումներ , գաղափարներ ,

. Ընդլայնում է աշխարհայացքը :

Հետազոտությունները ցույց են տալիս նաև , որ մանկապարտեզից հետո երեխաներն ավելի արագ և հեշտ են հարմարվում դպրոցին : Այստեղ ձեռք են բերում ոչ միայն ուսումնական գիտելիքներ , այլ նաև մի շարք հմտություններ օրինակ՝ կարգ ու կանոնին հետևելը, կենտորանցումը , սոցիալական հմտությունները և այլն :

1.3 Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման :

Երեխաների դաստիարակության գործում ահատական մոտեցման հիմնախնդիրը միշտ էլ եղել է առաջադեմ մանկավարժության ուղորդության կենտրոնում :

Կոմենսկու մանկավարժական համակարգում շատ պարզ նշված է այն մասին , որ ուսուցման և դաստիարակության ողջ գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները :

Ռուս մանկավարժ Ուշինսկին մշակել է երեխաների նկատմամբ անհատական մոտեցման ընդարձակ մեթոդիկան : Միևնույն ժամանակ նա արտահայտել է և այն կարծիքը , որ դժվար իրավիճակներում հայտնված երեխաների նկատմամբ չի կարելի կիրառել ինչ- որ դեղատոմս ՝ դրանով իսկ շեշտադրելով խնդրի լուծման ստեղծագործական բնույթը :

Մակարենկոն գտնում էր , որ մանկավարժական խնդիրներ իրականացնելու համար շատ կարևոր է անհատական մոտեցման սկզբունքը ՝ հատկապես կոլեկտիվի ձևավորման գործում , աշխատանքում , խաղում և այլն: Նա եկավ այն համոզման , որ իրականացնելով անձնավորության դաստիարակության ընդհանուր ծրագիրը ՝ մանկավարժ- դաստիարակն այնտեղ պետք է ներմուծի « ճշգրտումներ »՝ կապված երեխայի անհատական առանձնահատկությունների հետ : Երեխայի բնավորության մեջ ընդհանուրը և անհատականը խիստ փոխկապակցված են « խճճված հանգույցներ »: Սրանով Մակարենկոն ընդգծում էր անհատական մոտեցման դժվարությունը: Նա գտնում էր , որ դաստիարակության և ուսուցման գործընթացում պետք է հենվել երեխայի դրական որակների վրա : Ըստ նրա սա գլխավոր հենարանն է դաստիարակության ընդհանուր համակարգում և անահատական մոտեցման սկզբունքում : Դրա համար ամեն մի երեխայի մեջ անհրաժեշտ է հայնտաբերել

բնավորության դրական կողմերը և արարքները և հավատ ներշնչել իր ուժերի և հնարավորությունների նկատմամբ :

Մակարենկոն իր ողջ պրակտիկ աշխատանքի ընթացքում ապացուցել է , որ միայն կոլեկտիվում երեխան կարող է ստանալ այնպիսի որակներ , ինչպիսին են ՝ ազնվության, մարդասիրության, նպատակաուղղվածության, հարգանք ընկերոջ նկատմամբ : Չնայած այս տեսակետին , նա ընդգծում էր , որ այս որակը զարգացնելիս հաշվի պետք է առնել անհատական մոտեցման անհրաժեշտությանը :

Ինչպես խորհրդային շատ մանկավարժներ , այնպել էլ Մակարենկոն նախադպրոցական տարիքի երեխայի ուսուցման և դաստիարակության ամենամեծ միջոցը համարում էր խաղը . «Ինչպիսին երեխան խաղում է , այնպիսին էլ կլինի աշխատանքում երբ մեծանա » : Երեխաների նկատմամբ անհատական մոտեցման հիմնախնդիրներն իր մեծ արձագանքն է գտել Սուխոմիլիսկու մանկավարժական հայացքներում : Դաստիարակության հաջողությունն նա դիտարկում էր այսպես ՝ «Դաստիարակությանը նախ և առաջ մանդաբանություն է : Առանց երեխային ճանաչելու՝ առանց իմանալու նրա մտավոր զարգացումը, մտածողությունը , հետաքրքրությունները, ընդհունակությունները , հրապուրանքները, հակումները չկա դաստիարակություն »

Երեխաների անհատական առանձնահատկությունների ճանապարհը Սուխոմիլիսկին համարում էր ընտանիքը , նրա տարրական գիտելիքները :Երեխայի համար ընտանիքը համարվում է բնականաբար դաստիարակող միջավայր : Այն մեծ ազդեցություն է ունենում երեխայի բնավորության և վարքի ձևավորման վրա :

Աշխարհճանաչման առաջին դասերը ստանում է ընտանիքում : Շատ ծնողներ չունենալով կրթություն, ծանոթ չլինելով մանկավարժության այսօրվա նվաճումներին , լիարժեք չեն պատկերացնում անհատական մոտեցման անհրաժեշտության դերը : Դրա համար անհրաժեշտ է դաստիարակության գործընթացում միասնականություն

ընտանիքի անդամների միջև : Անհրաժեշտ փաստեր արձանագրելու համար երեխային պետք է ուսումնասիրել թե' տանը, թե' մանկապարտեզում : Այս աշխատանքը պետք է կատարել շատ զգուշորեն , քանի որ այն նուրբ հարց է : Սկզբում անհրաժեշտ է խոսել

դրական որակների , նրանց կարողությունների , հետաքրքրությունների մասին : Այդպես ծնողները կհասկական , որ դաստիարակները ոչ թե մտածված շեշտում են թերությունները, այլ փորձում են այնպես անել , որ երեխաները դառնան ավելի լավը : Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ծնողների և դաստիարակների միջև ստեղծել վստահություն և փոխըմբռնում : Կարևոր է ոչ թե պահանջել , այլ համոզել , որոշակի դեպքերում հարգել նաև նրանց հետաքրքրությունները, արթնացնել հետաքրքրություն իր երեխայի նկատմամբ , ցույց տալ , որ երեխան ոչ թե հոգս է ,այլ ուրախություն , կյանքի նպատակ :

Եզրակացություն

Մանկապարտեզը սահմանում է երեխայի օրվա հստակ օրակարգը (ռեժիմը):

Մանկապարտեզ հաճախելու ցանկալի տարիքը երեք տարեկանն է , չնայած մեծ մասը հաճախում է երկու տարեկանից սկսած :

Մանկապարտեզ հաճախող երեխան հետագայում ավելի հեշտ է հարմարվում դպրոցում,քանի որ երեխան արդեն ձեռք բերած է լինում մի շարք հմտություններ :

Մանկապարտեզի աշխատանքներում ծնողներին ներգրավելու համար դաստիարակը պետք է այնքան հմուտ լինի , որ կարողանա հաղորդակցվի և հեշտությամբ ներգրավվի ծնողներին կատարվող աշխատանքներում: Ընտանիք – մանկապարտեզ համագործակցությունով է պայմանավորված կատարվող աշխատանքների հաջողությունը : Այդ ճիշտ և կազմակերպված համագործակցությունից շահում են թե' երեխան , թե' մանկապարտեզը և թե' ընտանիքը :

Ծնողները համարվում են երեխայի առաջին ուսուցիչը և օրինակ են ծառայում իրենց վարքով : Դրա համար յուրաքանչյուր ոք , ովքեր գտնվում են երեխայի շրջապատում , պետք է հետևեն իրենց խոսքին և վարքին :

Ընտանիքները տարբեր են լինում ՝ իրենց բնույթով : Դաստիարակը պետք է կարողանա ճիշտ համագործակցի ընտանիքի հետ :

Ծնող - դաստիարակ համագործակցությունը տալիս է ցանկալի արդյունք կատարվող աշխատանքները իրականացնելու համար :

Օգտագործված գրանակության ցանկ

1.Ամիրջանյան Յու . Ա. , Սահակյան Ա. Ս. , մանկավարժություն Երևան 2005, 455 էջ :

2. Սուխոմինսկի Վ. Ա. , Սիրտս նվիրում եմ երեխաներին , Երևան 1977, 319 էջ :

3.Սուխոմինսկի Վ. Ա. Պավլիշի միջնակարգ դպրոցը , Երևան 1984 , 502 էջ :

4.Макаренко А . С. , О воспитании , Москва , 1988, 256 Стр:

5. Համացանց :